ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ 15/22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 18 մայիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Նարեկ Համբարձումյանի, Արամայիս Փաշինյանի, և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի մայիսի 18-ին քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արմեն Ժորայի Բեկթաշյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում սխալ և ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 13-ի N ՎԻՎ 15/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը.

ՊԱՐԶԵՑ

1.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, 2020 թվականի մարտի 25-ի ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ

2641

կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, իրականացնելով դատավորների հայտարարագրերի վերլուծություն, պարզել է, որ Արմեն Ժորայի Բեկթաշյանը 2021 թվականի մայիսի 18-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) Բ.6.1 «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում տարեվերջին, չի հայտարարագրել իր անկանխիկ դրամական միջոցները, մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Արմեն Ժորայի Բեկթաշյանի բանկային հաշիվներին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է եղել 411.766 (չորս հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ դրամական միջոցների մնացորդ, ինչի առնչությամբ 2022 թվականի մայիսի 13-ին հարուցել է թիվ ՎԻՎ 15/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 4-ին Արմեն Բեկթաշյանին է հասցեագրել թիվ 01/829-2022 ծանուցումն Հայտարարագրում հայտնաբերված վերոշարադրյալ անհամապատասխանության վերաբերյալ՝ հրավիրելով 2022 թվականի մայիսի 13-ին վերջինիս ներկայությամբ կազմելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

1.3 Արմեն Բեկթաշյանը 2022 թվականի մայիսի 12-ին Մ-2237-2022 մտից գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել թիվ 01/829-2022 ծանուցագրում նշված անհամապատասխանության վերաբերյալ գրավոր դիրքորոշում՝ ներկայացնելով բացատրություն իր կողմից Հայտարարագրի Բ.6.1 «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում տարեվերջին անկանխիկ դրամական միջոցներ չհայտարարագրելու վերաբերյալ՝ կից ուղարկելով նաև իր բանկային հաշիվների դրամական միջոցների շարժի վերաբերյալ քաղվածքների կնկնօրինակները, որոնց բնօրինակ տարբերակները՝ հաստատված համապատասխան բանկերի կողմից, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակ ներկայացվել է Արմեն Բեկթաշյանի ներկայացուցիչ՝ Էմմա Բեկթաշյանի կողմից:

265

1.4 2022 թվականի մայիսի 13-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 15/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 18-ին, ինչի կապակցությամբ Արմեն Բեկթաշյանը պատշաճ ծանուցվել է և լիազորել է իր անունից հանդես գալ Էմմա Արմենի Բեկթաշյանին:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Արմեն Բեկթաշյանն իր գրավոր դիրքորոշմամբ, մասնավորապես, հայտնել է, որ անկանխիկ դրամական միջոցների վերաբերյալ առկա տեղեկատվությունը վերջին բոլոր հայտարարագրերում իր կողմից տրամադրվել է՝ հաշվի առնելով առկա դրամական ավանդները կամ խոշոր դրամական գումարները, և քանի որ չի պահանջվել բանկային հաշվի մնացորդի քաղվածք, տվյալ պահին այդ մնացորդի մասին չի ունեցել տեղեկատվություն: Կոնկրետ դեպքում տեղեկատվության չտրամադրումը որևէ դիտավորություն չի հետապնդել, այլ պարզապես տվյալին չտիրապետելով և ելնելով վերը նշված պատճառներից չի ներկայացրել:

Նշված դիրքորոշումը գործի քննության ընթացքում պնդել է նաև վերջինիս ներկայացուցիչ Էմմա Բեկթաշյանը՝ մասնավորապես, վկայակոչելով բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների փոքր չափերը և դրանց վերաբերյալ հայտարարագիրը լրացնելու պահին տեղեկատվություն չունենալը:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների համակողմանի քննություն, հաստատված է համարում հետևյալը.

Արմեն Բեկթաշյանը Հայտարարագրի Բ.6.1 «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում տարեվերջին չի հայտարարագրել իր անկանխիկ դրամական միջոցները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վերջինիս անվամբ ընկերության կողմից սպասարկվող բանկային հաշվին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է եղել 4533,90 ՀՀ դրամ միջոց, իսկ

ընկերության կողմից սպասարկվող բանկային հաշիվներում՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համապատասխանաբար առկա են եղել 145.015,70 ՀՀ դրամ, 100.000 ՀՀ դրամ, 18719,2 ՀՀ դրամ ինչպես նաև 143.477,6 ՀՀ դրամ դրամական միջոցներ, ընդհանուր գումարով 411.766 (չորս հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ դրամական միջոցների մնացորդ, հետևաբար, Արմեն Բեկթաշյանի Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը:

4.1 Արմեն Բեկթաշյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած), իսկ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը: Դրանից բացի՝ նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ դրամական միջոցի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը:

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.9 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է գործի վարույթը կարճելու մասին որոշում (----) բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ անզգուշությամբ կատարվել է խախտում, այն է՝

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արմեն Ժորայի Բեկթաշյանի կողմից Հայտարարագրի Բ.6.1 «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում տարեվերջին անզգուշությամբ չի հայտարարագրել իր անկանխիկ դրամական միջոցները այն է՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա Արմեն Ժորայի Բեկթաշյանի անվամբ

կողմից սպասարկվող բանկային հաշվում 4533,90 ՀՀ դրամ միջոց, իսկ ընկերության և

ՓԲ ընկերության կողմից սպասարկվող բանկային հաշիվներում՝ համապատասխանաբար 145.015,70 ՀՀ դրամ, 100.000 ՀՀ դրամ, 18719,2 ՀՀ դրամ ինչպես նաև 143.477,6 ՀՀ դրամ դրամական միջոցներ, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջը, որի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած): Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ Արմեն Ժորայի Բեկթաշյանի կողմից չհայտարարագրված գումարի ընդհանուր չափը կազմում է 411.766 (չորս հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ, և ***այն չի գերազանցում պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը***: Բացի այդ, սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ հայտարարատուի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներից յուրաքանչյուրի մնացորդի չափը չի գերազանցել 200 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Բանկային հաշիվներում, համապատասխանաբար, առկա են եղել հետևյալ մնացորդները՝ ընկերություն՝ 4533,90 ՀՀ դրամ, ընկերություն՝ 18719,2 ՀՀ դրամ, ՓԲ ընկերություն՝ 145.015,70 ՀՀ դրամ և 100.000 ՀՀ դրամ, ընկերություն՝ 143.477,6 ՀՀ դրամ: Նշված հանգամանքները մատնանշում են, որ խախտման արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Նման պայմաններում Հանձնաժողովը էական է համարում այն, որ հայտարարատուի կողմից ներկայացվել են այնպիսի ապացույցներ, որոնցով հավաստվում է չհայտարարագրված դրամական միջոցների աղբյուրների օրինականությունը՝ ապահովելով պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ Արմեն Բեկթաշյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արմեն Բեկթաշյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Բեկթաշյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արմեն Բեկթաշյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

Նիստը նախագահող՝ ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Անդամներ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

231